



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

22.03.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-102/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.06.2016թ. թիվ 1/73-1/16886-16 գրությամբ ներկայացված «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01247084) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-102/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 05.02.2016թ. թիվ 1/73-3/3725-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ քննչական կոմիտեի 17.02.2016թ. գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 13.03.2017թ. թիվ 1/6-1/7997-17 գրությունը, Կենտրոնի 13.06.2016թ. թիվ 01/04.1/2277-16 գրությունը, ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-102/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 20.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեի 23.12.2015թ. թիվ 08/18/231-15 գրության հիման վրա, 05.02.2016թ. թիվ 1/73-3/3725-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետև նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով

ուսումնասիրել «Դավ Բրիէյշն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի 23.12.2015թ. թիվ 08/18/231-15 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 13.06.2016թ. թիվ 01/04.1/2277-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 05.02.2016թ. թիվ 1/73-3/3725-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից **մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (26.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Դավ Բրիէյշն» ՍՊԸ-ն կարող է ներառվել Ցուցակում:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.06.2016թ. թիվ 1/73-1/16886-16 գրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել բողոքարկման գործընթաց՝ «Դավ Բրիէյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ի կողմից **2015թ. հոկտեմբերի 26-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ Նախարարությունը Պատվիրատուին է տրամադրել 31.10.2015թ. եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունն ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **425,383 ՀՀ դրամի չափով**, 04.11.2015թ. եզրակացությամբ՝ **չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ**, իսկ 10.12.2015թ. թիվ 1/73-3/39373-15 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 26.10.2015թ. ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ **744 489 ՀՀ դրամի չափով**:

Հաշվի առնելով Ընկերության ժամկետանց պարտավորություններին վերաբերող ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած տեղեկատվություններում առկա հակասությունը, Կենտրոնը 23.02.2017թ. թիվ 01/04.2/625-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով հայտնել «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն **26.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ, ի պատասխան որի՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.03.2017թ. թիվ 1/6-1/7997-17 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 26.10.2015թ. ունի 744 489 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

2. «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով, 16.02.2016թ. թիվ 01/04.1/470-16 գրությամբ դիմել է «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ին, սակայն վերջինիս կողմից կարծիք չի ներկայացվել:

3. ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով 16.02.2016թ. թիվ 01/04.1/471-16 գրությամբ դիմել է ՀՀ քննչական կոմիտեին:

ՀՀ քննչական կոմիտեն 17.02.2016թ. գրությամբ Կենտրոնին առաջարկել է ղեկավարվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով:

4. ՍՑ-ԳԲԽ-102/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 20.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 22.06.2016թ. թիվ 1/73-1/16886-16 գրությամբ ներկայացված «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01247084) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-102/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 22.06.2016թ. թիվ 1/73-1/16886-16 գրությամբ ներկայացված «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՇՀԾՁԲ-15/23-ՀՀՔԿԴ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (26.10.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 28.10.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է 31.10.2015թ. եզրակացություն, համաձայն որի «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն 2015թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **425 383 ՀՀ դրամի չափով:**

5. Պատվիրատուի կողմից արված կրկնակի հարցմանն ի պատասխան, ՀՀ ֆինանսների նախարարությունը տրամադրել է 04.11.2015թ. եզրակացություն՝ համաձայն որի «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն 2015թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) **չի ունեցել** ժամկետանց հարկային պարտավորություն:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.11.2015թ. ժամը 17:00- տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու մասին Նախարարությունից ստացված դրական եզրակացությունը, որոշել է Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ին:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.12.2015թ. թիվ 1/73-3/39373-15 գրությամբ դիմել է ՀՀ քննչական կոմիտեին՝ հայտնելով, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն պատվիրատուները կրկնակի հարցում կատարելու լիազորություն չունեն, ուստի Ընկերությունը 26.10.2015թ. ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ **744 489 ՀՀ դրամի չափով:**

8. ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.02.2016թ. թիվ 1/73-1/3725-16 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության Արաբկիրի հարկային տեսչության 28-2/[985725]-15 գրությունը, համաձայն որի՝ Ընկերությունն Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (26.10.2015թ.) օրվա դրությամբ ունեցել է 744,489 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

9. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.06.2016թ. թիվ 01/04.1/2277-16 գրությամբ արձանագրել է «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և հայտնել, որ խախտումը թույլ տալու պահից (26.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն կարող է ներառվել Ցուցակում:

10. Ի պատասխան Կենտրոնի 13.06.2016թ. թիվ 01/04.1/2277-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 22.06.2016թ. թիվ 1/73-1/16886-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

11. Հաշվի առնելով Ընկերության ժամկետանց պարտավորություններին վերաբերող ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած տեղեկատվությունների առկա հակասությունը, Կենտրոնը 23.02.2017թ. թիվ 01/04.2/625-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով հայտնել «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն **26.10.2015թ. դրությամբ (հայրը ներկայացնելու օրվա դրությամբ)** ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

12. Կենտրոնի 23.02.2017թ. թիվ 01/04.2/625-17 գրությամբ արված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.03.2017թ. թիվ 1/6-1/7997-17 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 26.10.2015թ. ունի **744 489 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-102/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն**

անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում **ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից

ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է Կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և *պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:*

Այսպիսով, ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԾԶԲ-15/23-ՀՀՔԿԴ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է; որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (26.10.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ի վերաբերյալ, ի պատասխան որի՝ ՀՀ Նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ **«Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն 2015թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 425 383 ՀՀ դրամի չափով:**

Սակայն, ի պատասխան ՀՀ քննչական կոմիտեի կրկնակի հարցմանը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է 04.11.2015թ. եզրակացություն, համաձայն որի՝ «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ն Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.12.2015թ. թիվ 1/73-3/39373-15 գրությամբ դիմել է ՀՀ քննչական կոմիտեին՝ հայտնելով, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն պատվիրատուները կրկնակի հարցում կատարելու լիազորություն չունեն, ուստի Ընկերությունը 26.10.2015թ. ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ **744 489 ՀՀ դրամի չափով**:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.02.2016թ. թիվ 1/73-1/3725-16 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության Արաբկիրի հարկային տեսչության 28-2/[985725]-15 գրությունը, համաձայն որի՝ Ընկերությունն Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (26.10.2015թ.) օրվա դրությամբ ունեցել է 744,489 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Կենտրոնի 23.02.2017թ. թիվ 01/04.2/625-17 գրությամբ արված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.03.2017թ. թիվ 1/6-1/7997-17 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 26.10.2015թ. ունի **744 489 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ի կողմից 26.10.2015թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

• նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

• *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը**, սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ **խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ, մինչև սույն եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-102/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ առկա չէ որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (26.10.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Վերը նշված դիրքորոշումը Կենտրոնը 13.06.2016թ. թիվ 01/04.1/2277-16 գրությամբ հայտնել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Մինչդեռ, ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.06.2016թ. թիվ 1/73-1/16886-16 գրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 22.06.2016թ. թիվ 1/73-1/16886-16 գրությամբ ներկայացված «Դավ Քրիեյշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01247084) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Հանձնաժողովի անդամներ՝



Արամյան Գրիգոր



Հովհաննիսյան Ռուզաննա